ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 375 - Ա **21 դեկտեմբերի 2017 թ.**

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության սահմանները պաշտպանելիս զոհված զինծառայողների ընտանիքներին հատկացնել 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ յուրաքանչյուրին 100000/մեկ հարյուր հազար/ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ Տիգրան Հակոբյանի միջոցով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2017 թ. դեկտեմբերի 21-ի
N 375 որոշման

ՑՈՒՑԱԿ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ

h/h	ազգանուն, անուն	հասցե	հատկացված գումարի չափը դրամով	ծանոթություն
1.	Անդրանիկ Սմբատի Մուսիկյանի ընտանիք	Գեղարքունիքի մարզ,գ.Գեղհովիտ	100000/մեկ հարյուր հազար/	Զոհված զինծառայողի ընտանիք
2.	Վիգեն Ժիրայրի Պետրոսյանի ընտանիք	Գեղարքունիքի մարզ,ք.Սևան	100000/մեկ հարյուր հազար/	Զոհված զինծառայողի ընտանիք
3.	Սարգիս Միհրի Մելիքյանի ընտանիք	Գեղարքունիքի մարզ,ք.Վարդենիս	100000/մեկ հարյուր հազար/	Զոհված զինծառայողի ընտանիք
4.	Ընդամենը		300000/երեք հարյուր հազար/	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Կատարող՝ՖՍՏՀ Վարչություն
Ա.Բաղեյան